ՓԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Փակագիրը մեկ տառամայրի վրա հնարագետ կցագրությամբ, գեղեցիկ ձևավորված, ամբողջական իմաստ կազմող բառ կամ բառերի խումբ է։

Հայ վիմագրության մեջ փակագրերի մեծ մասը ներկայացնում են անձնանուններ ու առանձին բառեր՝ հարմարեցված որևէ գլխատառի վրա։ Վիմագիր փակագրերի դդալի մասը միավանկ բառեր են, որոնց վերծանությունը. առանձին դժվարություն չի հարուցում՝ հարակից բառիմաստների կապակցության շնորհիվ։ Նման պարզագույն փակագրերն օգտագործվել են տեղ ու ժամանակ խնայելու նպատակով։ Անհամեմատ բարդ է բազմավանկ կամ մի քանի բառ կազմող փակագրերի վերծանումը, իսկ առանձին հանդիպող փակագրերի վերծանումը ավելի բան խրթին է, բանի որ դրանք չունեն վերծանմանն աջակցող որևէ կովան։

Վիմագիր փակագրերի բազմամյա և տևական դիտարկումները մեզ բերել են որոշ եզրահանգումների. ա) եթե ձեռագրերում փակագրությունը կիրառվել է սկսած XII դ.[1], իսկ կնիքների և մատանիների վրա ավելի ուշ, ապա վիմագրերում այն օգտագործվել է V—VI դդ.։ բ) Փակագրերի գերակշիռ մասը կազմված է Ա տառամայրի վրա։ Մի քանի բառերի դեպքում մայր տառին աջից ու ներսի կողմից կցվում են այլ տառեր ևս։ գ) Փակագրերը հորինված են կցագրությամբ ըստ ընձեռված հնարավորության՝ կիրառելով նրա մեկ կամ մի քանի սկզբունքները[2]։ դ) Փակագրերը հիմնականում փորագրված են ազատ որմերին՝ բնավ չհետապնդելով տեղի կամ ժամանակի խնայողության նպատակ։ ե) Փակագրերով գրված են վանական, եկեղեցական հաստատությունների առաջնորդների, մեկենասների, նվիրատուների կամ ճարտարապետների անունները։ զ) Փակագրերը սրամիտ գրչախաղային առկայծումներ են. գրիչները հնարագետ, գեղաղարդ գրակոմպոզիցիաներով ցանկացել են առաջին հայացքից ուշադրություն դրավել, լարել մարդու միտքը, դրդել լուծելու առեղծվածը և մշտապես մնալ այն բացողների հիշողության մեջ։ Չի բացառվում անունները գաղտնի պահելու դրդապատճառի առկայությունը, քանի որ նրանց համբավը մոռացումի տալու չար դիտավորությամբ նախանձոտ արվեստակիցները երբեմն ջնջում էին նախորդների անունները[3]։ է) Փակագրի վրա դրվում է պատվի նշան, թեև կան բացառություններ։ ը) Փակա-

---

1 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի ու գրչության պատմություն, Երևան, 1953, էջ 301։

2 Կցագրության սկզբունքների մասին տե՛ս «Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ» մեր հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 4, էջ 61—78)։

3 Ա. Գ. Աբրահամյանի կարծիքով գրիչները նաև այս պատճառով էին ծածկագրում իրենց անունները («Հայոց գիր և գրչություն», Երևան, 1973, էջ 244)։

գրի վրա կցվում, հարմարեցվում են բառի համար անհրաժեշտ բոլոր տառերը (Հաղբատ, Առինջ և այլն)։ թ) Փակագրի վրա չեն գրվում բոլոր տառերը և անգամ չի դրվում պատվի նշան։ ժ) Փակագրի տառերը փորագրվում են մերթ հաջորդաբար, մերթ խառնիխուռն։ ժա) Մի քանի անգամ կրկնվող տառերը սովորաբար նշվում են մեկ, իսկ երբեմն էլ այնքան անգամ, որքան կրկնվում են։ ժբ) Սակավ դեպքերում հանդիպում են սիմվոլային խորհրդանշաններ կամ գաղափարագրեր (Խոր-Վիրապ, Զորագյուղ)։ ժգ) Իմաստի լրացմանը մասնակցում են փակագրի մոտ գտնվող խաչաքանդակները։

Այս մասնակի հետևություններում կարելի է համոզվել, խորազնին դիտելով ստորև ներկայացվող փակագրերը։

Փակագրերը ներկայացվում են ժամանակագրական հաջորդականությամբ, որը հնարավորություն կտա հետևելու փակագրության զարգացմանը պարզից դեպի բարդը և գրչական ակնբախ ձևափոխություններին։

ԳՐԻԳՈՐ (գծ. 1). Այս անձնանունը փորագրված է Դվինի պեղումներից հայտնաբերված հարթ երեսապատ քարի բեկորի վրա, որն այժմ գտնվում է տեղի թանգարանի բակում։ Փակագրությունը V—VI դդ. է, պարզ է և դյուրընթեռնելի։ Գրիգոր հատուկ անվան նման փակագրումը պահպանվել է ողջ միջնադարում։

ԱՐԳԱՄ (գծ. 2). Թալինի շրջանի Շենիկ գյուղի V—VI դդ. միանավ բազիլիկայի արևելյան պատուհանի պսակի անկյուններում փակագրված է այս հինավուրց կառույցի ճարտարապետի անունը[4]։ Ակնբախ է, որ փորագրողը սկզբում մշակել է անվան առաջին տառը, ապա նրա վրա հարմարեցրել, կցել է հաջորդ տառերը։ Այս կարգը նկատվում է գրեթե բոլոր փակագրերում։

...ՊԵՏ (գծ. 3). Ապարանի շրջանի Հարթավան գյուղի տարածքում է գտնվում միջնադարի մշակութային կենտրոններից մեկը՝ Աստվածընկալ վանքը։ Համալիրի հարավային եզրի V—VI դդ. միանավ բազիլիկայի[5] արևելյան պատի վերին գետնախարիսխներին փորագրված այս փոքրիկ փակագիրն էլ նույն ժամանակաշրջանի է։ Եղծված ու դժվարընթեռնելի այս փակագիրը պայմանականորեն կարելի է վերծանել ԿԱՐԱՊԵՏ։

ԴԱՒԻԹ (գծ. 3ա). Նկատել և լուսանկարել է ճարտարապետ Ս. Մաթևոսյանը, Քասաղի բազիլիկայի արտաքին պատի վրայից։ Դժվար է ստույգ պնդել, թե փակագիրը հուշարձանի ժամանակակիցն է (V դ.), բայց հորինվածքով խիստ նման է Հարթավանի փակագրին։

ԱԴԱՄԱԻ (գծ. 4). Պեմզաշենի VII դ. եկեղեցու ներսում, արևմտյան մուտքի հյուսիսային պատի հարավային ճակատին պահպանվող այս փակագիրը վերծանել է Պ. Մուրադյանը[6]։ Ուշագրավ է, որ այն ամբողջացնող բոլոր տառերը կան հուշարձանի առանձին քարերի վրա։

ՎԱՐԴԷՍ (գծ. 5). Գառնահովտի (Թալինի շրջան) VI—VII դդ. գմբեթակիր հուշարձանի արևմտյան մուտքից ձախ, հավասարաթև խաչաքանդակնե-

---

4 Փակագիրն ստացել ենք ճարտարապետ Վ. Գրիգորյանից։

5 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1946, էջ 203։

6 Պ. Մուրադյան, «Յոհան սարկաւագ», թե՞ «Յոհան, Գարկ» («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 236)։

րի երկու կողմում սիմետրիկ երկու կապգիր տառերով ներկայացված է այս եղակի շինության ճարտարապետի անունը[7]։

ՍԱՐԳԻՍ (գծ. 6). Այունի վանքի (Սիսիան) հարավ-արևելյան խորանի նիրսի (VI—VII դդ.) այս փակագրի հավանական վերծանումը տրվել է ԱԲ-ԳԱՐ[8]։ Բայց այդ դեպքում Ա-ի միջնատեղը կլիներ առաջին տառի վրա, իսկ Բ-ի ստորին ելուներ կլորացվելով չէր հակվի ներքև։ Այս հուշարձանի որմերին կան Սարգիս անձնանունը կազմող բոլոր տառերը, այն էլ անհամեմատ մեծ թվով։ Ուրեմն Սարգիս վարպետը եկեղեցին կառուցողներից ամենանշանավորն է և նրա անունը փակագրվել է շինության վրա։

Այս սակավ օրինակներով իսկ ակնհայտորեն դրսևորվում են վաղ շրջանից մեզ հասած փակագրերի բնորոշ առանձնահատկությունները. դրանք պարզ և կարճ (երկվանկ) անձնանուններ են, որոնց տակ ծածկագրված են հատկապես ճարտարապետների անունները։

Մեր հավաքածուում չկան VIII—XII դդ. վերաբերող առանձին անձնանունների փակագրեր։ Դրանք ավելի մեծ թվով հանդես են գալիս XIII դ. և հետզհետե բարդանալով՝ հարատևում են մինչև մեր օրերը։ XV—XVII դդ. փակագրերն իրենց բարդությամբ ու խճճվածությամբ երբեմն ոճավորված կարդաքանդակներ են հիշեցնում։ Ստորև ներկայացնում ենք XIII և հետագա դարերից մեզ հայտնի փակագրերը՝ դրանց մասին տալով հակիրճ տեղեկություններ։

ՆԵՐՍԷՍ (գծ. 7). Փակագիրը 1969 թ. արտագրել է հնագետ Ա. Քալանթարյանը, Դսեղի գյուղամիջյան գերեզմանոցի ՌՀԷ (1228) թվագիր խաչքարի կողից։

ԴԱՒԻԹ (գծ. 8). Այս անվան փակագրումը թե՛ հոլովված, թե՛ ուղիղ ձևով խիստ տարածված է վիմագրության մեջ (Մուղնի, Հերմոնի վանք)։ Այս, ինչպես և ՈՐԴԻ (գծ. 9), ՈՐԴՈ (գծ. 10) փակագրերն առնված են Խորակերտի վանքի մուտքի 1252 թ. ընդարձակ և կարևոր արձանագրությունից, իսկ ԱՐԴ (գծ. 11) և ԴԱՏԻ (գծ. 12) փակագրերը՝ նույն գավթի XIII դ. այլ վիմագրերից։

ՎԱՐՇԱՄ (գծ. 13). Ագատ գյուղի (Վարդենիսի շրջան) արևելյան եզրի գերեզմանոցի 1288 թ. խաչքարից առնված այս փակագիրը Ս. Բարխուդարյանը երկմտանքով կարդացել է Ստեփան։ Թեև կցագրերը, ինչպես կարելի է համոզվել գծագրերով, նման հնարավորություն չեն ընձեռում։ Մեզ ավելի հավանական է թվում Վարշամ տառադարձումը։

ԵԻ ՄԵՐ (գծ. 14). Հոռոմայրի ս. Նշան վանքի ժայռալանջին քարձ Լոյսիկի թողած XIII դ. նվիրատվական բնագրում հանդիպող այս փակագիրը նկատվում է այլ արձանագրություններում ևս։

---

7 Ա. Ա. Մանուչարյան, Քննություն Հայաստանի IV—XI դարերի շինարարական վկայագրերի, Երևան, 1977, էջ 80—86. Նույն կարծիքն է հայտնել ճարտարապետ Ս. Մաթևոսյանը, 1976 թ. մեզ տրամադրելով լուսանկարները։ Ի դեպ, թերևս երկմտելով, որ անունը միշտ չի ընթերցվի, այն գրվել է նաև տառերի լրիվ փորագրմամբ, առաջինի հարևանությամբ։

8 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց Ս. Դ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 92—93։

9 «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, կազմեց Ս. Դ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 368։

ԱՒՐՆ (գծ. 15). Նույն և բազմաթիվ այլ արձանագրություններում տեղ գտած օր բառի նման փակագրումն ընդհանուր տարածում ունի ավելի վաղ շրջանից։

ԱՄՈՒՍՆԻՆ (գծ. 16). Այս եզակի փակագիրը ևս նույն արձանագրության մեջ է։ Այս և նախորդ երկու փակագրերը պարունակող արձանագրու-

Նկ. 1.

թյուններ հրատարակվել է բազմաթիվ սխալներով, իսկ փակագրերը բաց են թողնվել[10]։

ՍԱՐԳԻՍ. Փակագիրը գտնվում է Եղվարդի եռահարկ եկեղեցու մուտքի ձախ կողմի արձանագրության վերջին տողում, որն ամբողջովին բացվել է անշուք գավիթը քանդելուց հետո։ Ուշագրավ է, որ այս վիմագիր տառաձևերը հետագայում (կամ դրանից հետո) կրկնվել են երկրորդ հարկի շքամուտքի ձախ կողմում, Մանվել եպիսկոպոս Ագիզբեկյանի 1471 թ. նվիրագրում։ Առաջին անգամ հրատարակվող այս նվիրագրությունը (գծ. 17, նկ. 1) հետևյալն է. ՇՆՈՐՀԻՒՆ Ա/ՍՏՈՒԾՈ/Յ ԵՍ ՁՈՒՐՁ/ՈՒ ՍԱՐԳԻՍ ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ՍՄՈՒՐՈ/Բ ՈՒԽՏԻՍ/ԵՒ ՏՎԱՔ ԱՐԴԻՒՆՍ Ի ՅԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՍՊ/ԱՍԱՒՈՐՔՍ ԽՈՍՏԱՑԱՆ Ի ՏԱՐԻՆ :Բ: (2) ԱՒՐ ՊԱՏԱՐԱԳ/. :Ա: (1) ԱՒՐ ՍԱՐԳԻՍԻՆ :Ա: (1)՝ ԽՈՐԻՇԱՀԻՆ... վերջին տողի տառերը կիսամշակ են, թերևս նշված է պատարագներ մատուցելու տոնը՝ «ի տաւնի ծննդե/ան Քրիստոսի/»։

ԱՇՈՏ (գծ. 18). 1970 թ. Թանահատի վանքի (Գլաձոր) շրջապատի փլատակների մաքրման ընթացքում բացված տապանաքարի վրայի այս փա-

---

10 Սարգիս վարդ. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տփղիս, 1842, էջ 94։ Կ. Կոստանյանցը Ջալալյանի հրատարակությունը համառոտագրել է յուրովի և, չգիտես ինչու, դրել 1286 թ. տակ («Վիմական տարեգիրք», Ս. Պետերբուրգ, 1913, էջ 128)։

կադրի գծագիրն ստացել ենք ճարտարապետ Ս. Մաթևոսյանից։ Այն վերծանում ենք ոչ առանց վերապահության և թվագրում ենք XII—XIII դդ.։

ԴԱՒԻԹ ԿԱՋՄՈՂ. Թվ Ջ.. (գծ. 19). Բեղմնավոր ու շնորհալի արվեստագետի կերտած խաչքարերից մի բեկոր, այս համառոտ, ելնդատառ հիշատակությամբ, գտել ենք Ավանի հյուսիսային կողմի գերեզմանոցում։ Ստորին մասում պահպանվում է հարյուրավորը (Ջ—1451 թ.), իսկ տասնավոր (գուցե նաև միավոր) թվատառերը կրող բեկորը չգտանք, սակայն այս վարպետի ձեռակերտ խաչքարերից պահպանվում են Էջմիածնում և Հավուց թառի վանքում՝ ստույգ թվագրված 1472-ով և 1476-ով։ Հետևաբար, Ավանի գավթակերտ խաչքարը սրանց ժամանակակիցն է։

Թվ. ՋԵ (1456), ՍԱՐԳԻՍ ԿԼԱՅՁԼՄՅՈՂ (գծ. 20). Այս հիշատակությունը Գայանե եկեղեցու սրահի հյուսիսային պատի խաչքարերից մեկի վրա է։ Ճիշտ վերծանելով վարպետի անունը, Ղ. Ալիշանի տեղեկատուն ընթերցել է «ՁԵ (636), խաչիս գծողդ»[11], իսկ Ս. Բարխուդարյանը թիվը կարդացել է ՁԵ (1256) և խաչքարի ոճը համարել բնորոշ XIII դ.՝։ Չնայած թվատառի հարյուրավորը քանդակված է փոքր-ինչ անսովոր ձևով, սակայն այն անվիճելի Ջ է, իսկ խաչքարի ոճը՝ հոծ մշակմամբ և մակերեսային քանդակներով, միանգամայն հարազատ է XV—XVI դդ.։ Նմանօրինակ բարձրաքանդակ Ջ հաճախ է հանդիպում Գեղարքունիքի XV—XVI դդ. վիմագրերում։

ԳՐԻԳՈՐ ՄԱՇԿԱԹԱԹ (գծ. 21). Փակագիրը Հավուց թառի վանքի բլրաեզրի մեծ եկեղեցու արևելյան պատի արձանագրությունների վերջում է։ Գ. Հովսեփյանը այն վերծանել է Գրիգոր Մագիստրոս և հարցականի տակ դրել տառամայրի ձախ ելուստի Մագիստրոս տառադարձումը, իսկ ժամանակը համարել է XIV դ. կեսը[13]։ Պարզ, հստակ փորագրված Մ, Շ, Կ, Թ, Ա տառերով կարելի է կազմել այլ բառեր ևս (Մշեցի կաթողիկոս, Մաշկևոր կաթողիկոս և այլն), սակայն դրանք, ինչպես և մեր առաջարկած Մաշկաթաթ մականվան ընթերցումը, մնում են պայմանական։

Երևանի հյուսիս-արևելյան կողմում ընկած Առինջ գյուղի պատմական հուշարձանների որմերից ընդօրինակել ենք մի շարք փակագրեր։ Դրանցից մեկը՝ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԼԱՅՁՄԼՈՅՂ (գծ. 22) փակագիրը պահպանվում է միջնադարյան Հայաստանի մշակութային նշանավոր կենտրոններից մեկի Զագավանքի, կիսավեր զանգակատան հյուսիսային պատի արևմտյան եզրի խաչաքանդակի մոտ։ Այն ստույգ վերծանել է Ս. Բարխուդարյանը (թեև չի տվել լուսանկար կամ գծագիր) և ժամանակը համարել է XVII դ.՝։ Առինջի պատմական գերեզմանոցի խաչքարերից մեկը հորինել է Աստվածատուր կաղմողը, 1424 թ.[15], իսկ Զագավանքի խաչաքանդակի ոճը հարազատ է այդ դարին, ուստի վերջինիս ժամանակը պետք է համարել XV դ. և նույնացնել վարպետին։

---

11 Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 243։

12 Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 143։

13 Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Երուսաղեմ, 1937, էջ 25—26։

14 Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 183։

15 Խաչքարի արձանագրությունը տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1978, № 4, էջ 66։

ԼԵՐ (գծ. 21ա). Այս բառը փակագրված է Սիմեոն բաբունապետի տապանագրում, 1428 թ., Զագավանքում[16]։

Առինջի հյուսիսահայաց բարձունքի վրա դեռ պահպանվում են երբեմնի հզոր ամրոցի ավերակները՝ բնակելի և հոգևոր շենքերի, խաչաբեկորների, բարձրաքանդակների մնացորդներով։ Ամրոցը հին է, սակայն այն հիմնավորապես վերակառուցվել է XV դ. վերջին քսանամյակում[17]։ Ամրոցում գտնվել են վեց փակագրեր, որոնցից հինգն անպայման առնչվում են նրա և ներսի եկեղեցու վերանորոգություններին։ Դրանք բավականին բարդ, հետաքրքիր հորինվածքով, մեծ չափերի (մինչև 40×70 սմ) գեղագրեր են[18]։ Փակագրերից երեքը արևելյան պատի որմածքի մեջ են, մուտքից աջ, իսկ մեկը, որ եղել է նույն շարքում, ընկած է նրանց դիմաց։ Այս չորս փակագրերը գրվել են բերդի նորոգման ընթացքում։ Այդ է վկայում դրանց կից հիշատակությունը՝ ՋԻԸ (1499) թ.։

ՅՈՀԱՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ (գծ. 29). Այսպես ենք վերծանում ամրոցի արևելյան պատի աջակողմյան, կիսաեղծ փակագիրը։ Մ. Օրմանյանի հաշվումներով Յոհաննեսը կաթողիկոս էր 1474—1484 թթ.։ 1481 թ. Զագավանքում գրված Ավետարանի հիշատակարանում ևս Էջմիածնի սուրբ աթոռի հայրապետ է հիշվում տեր Յոհաննեսը[19]։ Հ. Շահխաթունյանի ցուցակով այս ընթացքում կաթողիկոս էր Սարգիս Բ-ն (1466—1490)[20], իսկ Մ. Օրմանյանը վերջինիս գահակալությունը դնում է 1484-ից հետո։ Լ. Խաչիկյանի ենթադրությամբ Սարգիս Բ-ն և Գ-ն նույն անձն է, կաթողիկոսության շրջանը՝ 1481—1495 թթ.[21]։

---

16 Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս մեր «Սիմեոն բաբունապետ Տաթևացի» հոդվածը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1975, № 6, էջ 84—85)։

17 Ամրոցի վերանորոգման ժամանակի, մեկենասների և վարպետների մասին պահպանվող տասնուհինգ վիմագրերից առաջինը գրված է պարսպի հյուսիս-արևելյան անկյունաքարի արևելյան և հյուսիսային ճակատներին (գծ. 23). ՀԻՄՆԱՐԿԵՑԱԻ ՋԼԷ (1488) ԹՎԻՆ. /ԹՎ. ՋԽԱ (1492)։ Հիմնարկելն այստեղ ունի վերանորոգել իմաստը, իսկ վերջին թիվը մատնանշում է գործի ավարտը։ Հյուսիսային պատի վրա, առաջինից ոչ հեռու, մնում է 1486—1492 թթ. վերանորոգող վարպետի հիշատակությունը (գծ. 24). ՋՎԱՐՐՈՂԵՆՏ ԽԱՋԱՏՈՒՐ /ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՆՍ։ Արևելյան մուտքի ձախ կողմում, ներսից գրված է (գծ. 25) ՏԷՐ ՍԱՆՎԷԼ ՔԱՐԳՈՐԾ, ՈՐ/ԴԻ ՏԷՐ ՅՈՀԱՆԵՍԻՆ ՅԻ/ՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՆՍ. ԹՎ/ԻՆ] ՋԾ (1501)։ Նույն տառաձևերով հետևյալ երեք արձանագրությունների մեջ հիշատակված անձինք հավանաբար այդ ընթացքում եղել են Առինջի հոգևոր և աշխարհիկ առաջնորդները, նորոգման աշխատանքների մեկենասներն ու վերակացուները։ Դրանք են՝ ամրոցի հյուսիս-արևելյան անկյան ավերակուտի քարերից մեկի վրա (գծ. 26) ՄՍԸՐ ԱՂ/ԻՆ ՅԻՇԵՑ/ԷՔ Ի ՔՐԻՍՏՈՆՍ, նույն տեղում, պարսպից ընկած քարի վրա (գծ. 27) ՄԱՂԱԳԻԱ/ ԵՊ/ԻՍԿ/ՈՊՈՍ ԴԵ/ՂԱԱ ՅԻ/ՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՆՍ, վերջինից ոչ հեռու, անկանոն քարի վրա (գծ. 28) ԽԱՋԱՏՈՒՐ ՄԻԱՅՆԱԿԵԱՑ /ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՐԻՍՏՈՆՍ։

18 Ամրոցի փակագրերից երեքն ընգծրինակել են ճարտարապետներ Գ. Շիրինյանը, Հ. Ջանչյանը և Ա. Հարությունյանը։

19 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 14։ Գուցե և այստեղ հիշատակված է Սսի Հովհաննես Թլկուրանցի (1489—1515 թթ.) տաղասաց կաթողիկոսը (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթափյան, Երևան, 1965, էջ 1516)։

20 Յովհաննէս Շահխաթունեան, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ գավառացն Այրարատայ, հ. Ա, Վաղարշապատ, 1842, էջ 212։

21 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, էջ 10, 472 և այլն։

ԱՐԻՍՏԱԿԵՍ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍ (գծ. 30). Նույն շարքի ձախ թևի փակագիրն է։ Հ. Շահխաթունյանը նրա հայրապետությունը դնում է 1490—1498 թթ.[22], իսկ Հ. Անասյանը՝ 1468—1474 թթ.[23]։

ԱՆԱՆԻԱ ԿԱԹՈՂԻԿՈՍ (գծ. 31). Այս շրջանում էջմիածնում համանուն կաթողիկոս չի հիշվում, սակայն, թվում է, թե վերծանությունը ստույգ է։

Նկ. 2.

Պետք է ենթադրել, որ հայոց կաթողիկոսները մեծ կարևորություն տալով հզոր ամրոցներից զրկված Արարատյան աշխարհի պաշտպանությանը, անընդմեջ ջանքեր են գործադրել Ուռինջի բերդի ամրացման համար։ Դրանց թվում զգալի է եղել նաև Անանիայի գործունեությունը, որի անվան փակագիրը առաջինների միջև է, կից ՋԽԸ (1499) թվակիր արձանագրությանը։

ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ (գծ. 32). Վարսանգապտղային պատվի նշանով պսակված այս փակագիրը կրող քարը, որն ընկած է գետնին, եղել է առաջինների շարքում։ Փակագիրը կազմված է հմտությամբ, առանց մեծ բարդա-

22 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., էջ 212։

23 Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 748—749։

ցումների, տառերի կրկնությամբ (Ա-ն՝ չորս անգամ), բառերն ամբողջացնելու տարածված սկզբունքով։

ՎԱՐԴԱՆ (գծ. 33)։ Ընդօրինակել ենք Սանահնի վանքի կլոր եկեղեցու արևելյան պատից։ Այն կարող է վերաբերել Մագիստրոսի ճեմարանի տապանագրերից մեկում հիշատակված Վարդան սարկավագին[24], որը, Կ. Ղաֆադարյանի կարծիքով, ապրել է XV դ.։

Ջափուղանց խճողված հետևյալ փակագիրը (գծ. 34, նկ. 2) փորագրված է Հաղբատի զանգակատան հարավային պատին։ Առաջարկում ենք այն բացել հետևյալ կերպ. ՄԱՌԱԻՐ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻ ՆԻԿՈՂ, ՅԱԿՈՎԲ ԿԱՆԳՆԷ ԽԱՉՍ։ Թվում է, թե վերծանությունը համոզիչ է. նրանում ընդգրկված են բոլոր տառերը, անգամ գտնված է հաջորդականության շատ թե քիչ կանոնավոր սկզբունք, իսկ ԽԱՉՍ բառը «ներմուծում» ենք, ելնելով խաչաքանդակի գոյությունից։ Սակայն, այսուհանդերձ, գոյություն ունի թեականություն նրա նկատմամբ։ Փակագիրը կարող է նաև խաչը կազմողին կամ պատվիրատուին վերաբերվել։ Բայց հազիվ թե ընդունելի է փորագրված խաչի նկատմամբ կանգնել արտահայտության կիրառությունը։ Ի դեպ, նշենք, որ փակագրի մեջ դժվար չէ ընթերցել նաև Յովաննէս,Սաղուն, Աղբուղա, Նավասարդ անունները, բայց չենք գայթակղվում դրանցով։ Փակագրին կից ստորին ելունի «չղջիկաթև» զարդամոտիվով խաչաքանդակը մեծ աղերսներ ունի Հաղբատում 1435 թ. Դավիթ քահանայի հիշատակին դրված և 1448 թ. Առինջում հորինված մի խաչքարի հետ, թեև այդ ոճը տեսականորեն պահպանվում է Գուդարքում, մինչև XVII դ. վերջերը։

ՄԱԹԵՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ (գծ. 35). Փակագիրն ընդօրինակել ենք 1970 թ., հայկական ճարտարապետության ու քանդակագործության գլուխգործոցներից մեկի՝ Գանձասարի վանքի, գլխավոր եկեղեցու հյուսիսային պատից։ Հիշատակված անձին հակված ենք նույնացնելու XV դ. կեսերում Աղվանից կաթողիկոս Մատթեսի հետ[26], մանավանդ որ տառաձևերը (Մ, Ղ, Ե) ժամանակագրական նման դասակարգման հիմք են տալիս։

Թ. ՋԿ (1511), ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱԹՂԻԿՈՍՅ (գծ. 36). Փակագիրը պահպանվում է նույն տեղում։ Թեև նշված տարիներին Արցախում Ստեփանոս կաթողիկոս չի հիշվում (մենք չգիտենք այդ մասին), սակայն վերծանությունը համոզիչ է։

ԱԶՐԵՎԱՐԴ (գծ. 37). Նախորդներից ցած գտնվող այս փակագրի ներկայացվող տառադարձումը վերջնական ու անբեկ չենք համարում։

ՄԱՆՎԷԼ (գծ. 38). Հայկական քանդակագործության լավագույն ավանդույթներով մի շարք խաչքարեր ու տապանաքարեր է կերտել Վարդենիսում Մանվել վարպետը։ Տարաբնույթ քանդակներով մի տապանաքար էլ նա հորինել է 1521 թ., Լճավան գյուղից հարավ, Գթաշեն գյուղում, որի հյուսիսային ճակատին փորագրել է իր անունը, թեև այն չի նկատել արձանագրությունը վերծանողը[27],

---

24 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 144, արձ. 99։

25 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 236, արձ. 141։

26 Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 372—374։

27 «Դիվան», պրակ IV, էջ 300, արձ. 1244։

ԴԱՒԻԹ (գծ. 39). Շնորհալի քարգործ վարպետի անվան փակագրով օրորոցաձև մի տապանաքար կա (1528) Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղի «Խարաբա ժամ» կոչվող հնավայրում։ Փակագիրը ստույգ վերծանել է Ս. Բարխուդարյանը[28], թեև նրա գրչագիրը տրված է բնագրից ակնբախ շեղումներով։

ՄԱՒՐ (գծ. 40). Բառն այսպես է փակագրել Ձորագյուղցի (Մարտունու շրջան) նշանավոր տաղերգու, շինարար, Շահ-Արասի նվաճողական քաղաքականության ու բռնագաղթի քննադատ Դավիթ Գեղամեցի եպիսկոպոսը իր մոր հիշատակին Մասրուց Անապատ վանքի բակում ՌԻԴ—1575 թ. կանգնեցրած խաչքարի արձանագրության մեջ[29]։

ԽԱՉՍ (գծ. 41). Բառը փորագրված է Նորատուսի գլխավոր եկեղեցու մոտի XVI դ. խաչքարերից մեկի բիվի համառոտ արձանագրության մեջ։

ՄԱՐՏԼԻՅՐՈՍ ՔԱՀԱՆԱ (գծ. 42). Բատիկյան գյուղի ս. Գևորգ եկեղեցու հյուսիսային պատի արտաքին ճակատին ագուցված տապանաքարի սույն փակագիրը ստույգ ընդօրինակել է Ս. Բարխուդարյանը և այն համարել XVI—XVII դդ. գործ։ Միաժամանակ նա կռահել է, որ դա «անձնանուն է, թերևս նաև ազգանվան հետ միասին, ինչպես էլ վերծանվի, միշտ ենթադրական կմնա»[30]։ Փակագիրը բացվում է դյուրությամբ, առանց երկմտանքի։

ԱՐԱ (գծ. 43). 1975 թ. Աղցի դամբարանի հարավային հատվածի պեղումների ընթացքում հնագետ Է. Այվազյանը հայտնաբերել է թրծած կավե ծխամորճի գլուխ, որի վրա դաջված է վարպետի կնիքը։ XVI—XVII դդ. Հնություն ունեցող այս փակագիրը, Է. Այվազյանի կարծիքով, կարելի է ընթերցել ԱՄՐԱ, բայց այդ դեպքում Ր-ի ելունը կարվեր Ա-ի ձախ ստեղնի վրա՝ Մ-ի հետ չշփոթելու համար։ Բացի այդ նույն տառը, ինչպես ուսուցանում են փակագրերը, մերթ Մ, մերթ Ր իմաստով հազիվ կարող է հանդես գալ։

ԹՎ. ՌԾ (1601), ՆԱՆԱ (գծ. 44). Հին Ջուղայի գերեզմանոցից արևելք, երկաթգծի ժայռանցումի փոքր գերեզմանոցի խաչքարերից մեկի ստորին մասում փորագրված է ԽԼԱՅՉՍ ՅԼԻՅՇԼԱՅՅԼԱՅԿ Է/ ՆԱՆԱՅՋԱՆԻՆ, իսկ խորանի թվատառերից վերջինը կարող է Ա (1) լինել, սակայն երկու ստեղներն էլ վերևից ունեն Ն-ի ելուններ, ուստի այն համարում ենք նույն Նանաջանի անվան փակագրությունը։

ԹՎ. ՌԾԹ (1610). ԴԱՒԻԹ ԿԱԹՈԼՂԻԿՈՍ, ԿԱԿՆԷ ԽԱՉՍ (գծ. 45). Այս պարզ՝ կաթողիկոս փակագիրը պարունակող արձանագրությունը Էջմիածնի բազիլիկայի արևմտյան ճակատոնի կենտրոնում, անմիջապես բիվի տակ դրված խաչքարի վրա է։ Ամենայն հավանականությամբ խաչքարը եղել է Մայր տաճարի մերձակայքում և հետագայում տեղափոխվել է այստեղ։ Հիշատակված կաթողիկոսը Դավիթ V է, որը հայրապետ է օծվել 1593 թ.[31]։

ԹՎ. ՌԿԲ. Այս փակագիրը գտնվում է Սևանա թերակղզու փոքր եկեղեցու նախամուտքի աջ թևի արձանագրության վերջում։ Նորահայտ հիշատակա-

---

28 Նույն տեղում, էջ 305, արձ. 1262։

29 Արձանագրությունը հրատարակվել է առանց թվի (նույն տեղում, էջ 250, արձ. 1053)։

30 Նույն տեղում, էջ 89, արձ. 344։

31 Դավթի կաթողիկոսությունը դրվում է նաև 1580—1629 թթ. («Ցուցակ ձեռագրաց» հ. Ա, էջ 1485)։

գրությունը հավաստում է եկեղեցու դուռը պատրաստելու և տեղադրելու փաստը, որն է. ԵՍ՝ ԱՆԱՐԺԱՆ ԿԻՐ/ԱԿՈՍ ԱԲԵՂԱՅԷՍ/ ԿԱՆԽԵՍՑԻ ԴՈՒՌՍ /ՍԼՈՒՐՅԲ ԿԱՐԱՊԵՏԻՍ./ ՈՎ ԿՍՐՅԴԱ ՈՂԼՈՐՄՅԻ/ ԱՍԷ. ԹՎ. ՌԿԲ (1613), (գծ. 46)[32]։

ՏԷՐ ՍԱՐԳԻՍԻ ՈՐԴԻ (գծ. 48). Քանաքեռի ս. Հակոբ եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսային կամարակապից ներքև տեղադրված խաչքարի քիվի բավականին բարդ փակագրի մեր վերծանությամբ արձանագրությունը ստանում է հետևյալ պատկերը՝ ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ Է ՏԷՐ ՍԱՐԳԻՍԻ ՈՐԴԻ ՍԱՀԱԿԻՆ. ԹՎ. ՌՀ (1621)։ Արձանագրության առաջին հրատարակիչը փակագիրը գծագրել է աննշան վրիպումով և հնարավոր է համարել նրանում կարդալ Գրիգոր անունը՝ գուցե իր մականվամբ[33]։

ՅԱԿՈԲ ՎԼԱՅՐԴԼԱՅՊԵՏ (գծ. 50). Առինջի ամրոցից 100 մ արևելք, փոքրիկ բարձունքի մատուռի ավերակում ընկած գեղաքանդակ խաչքիվի այս փակագիրը բացվում է առանց էական դժվարության։ Արձանագրությունը վերծանում ենք ՍՍՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ Է ՄԱՆՈՒԷԼ ԵՊԼԻՅԺԿԼՈՅՊԼՈՅՍԼՐՆՅ. ՅԱԿՈԲ ՎԼԱՅՐԴԼԱՅՊԵՏ... Ի ԹՎ. ՌՂԷ (1648) ձևով, իսկ վերջին մասը մնում է անորոշ։ 1626 թ. «Ի երկիրս Աւարատայ, ի գիւղս, որ կոչի Առինջ։» Հակոբ վարդապետը Հէ (77) տարեկան հասակում գրել, ծաղկել է մի «Ավետարան»։ Ըստ հիշատակարանի Հակոբի եղբայրն է հիշված Մանուել եպիսկոպոսը, իսկ հորեղբայրը՝ Ստեփանոս կաթողիկոսը[34]։

ՆԱԻԱՅՍԱՐԴ (գծ. 51). Առինջեցի այս նշանավոր ճարտարապետը հանրահայտ է Հաղբատավանքում XVII դ. կատարած վերանորոգչական աշխատանքներով։ Ամենայն հավանականությամբ, նա նորոգել է նաև հայրենի դյուղի ամրոցի եկեղեցին, որի սեղանաքարի կոթունի վրա դրոշմել է իր անունը։ Փակագրում կրկնվող Ա-ն նշված է մեկ անգամ, մի սկզբունք, որը տարածված կիրառություն ունի։

ՆԱԻԱՅՍԱՐԴ (գծ. 52, նկ. 3). Շնորհալի ճարտարապետի անվան փակագրի ներկայացվող օրինակը Հաղբատի զանգակատան արևմտյան մուտքի ձախ կողմում է։ Կ. Ղաֆադարյանը նկատել, գծագրել է այն և համարել XIII դ. մի անվերծանելի անձնանուն[35]։ Թերևս փակագրի վերծանման դժվարության հարուցիչը նրա ոչ նույնական ընդօրինակությունն է, և վրիպումը շտկելուց հետո այն բացվում է առանց մեծ ջանքերի։ Փակագիրը կառուցված է բոլոր տառերն անխտիր ներկայացնելու սկզբունքով՝ թեև առանց հաջորդականության։

---

32 Արձանագրությունը դրված է ուղղագիծ երկաթադրով, անվարժ ձեռքով։ Ի դեպ, սրանից անմիջապես վերև կա մի այլ արձանագրություն՝ ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ ԾԱ/ՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ՇԻՆ/ԵՑԻ ՁԵԿԵՂԵՑ/ԻՍ... /ՁԻՍ ՑԱՂԱԻԹՍ Հ/ԻՇԵՑԷՔ. ԹՎ. ՅԾԲ (903), (գծ. 47)։ Նույն եկեղեցու Թմբուկի նիստերի արձանագրության և մատենագրական տվյալների համաձայն, Սևանա Թերակղզու եկեղեցիները կառուցել է Մարիամ Բագրատունին, Մաշտոց Եղվարդեցու աջակցությամբ՝ 874 թ.։ Այս ակնարկը, հավանաբար, վերաբերում է եկեղեցու նախամուտքի կառուցմանը։

33 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Երևան. Միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 212, արձ. 243։

34 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, կազմեցին Վ. Հ ա կ ո բ յ ա ն, Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Երևան, 1978, էջ 225—226։ XVII դ. Ստեփանոս անունով կաթողիկոս չի հիշվում Հ. Շահխաթունյանցի ցուցակում։

35 Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հաղբատ, էջ 222, արձ. 113։

ԲԱՐՍԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ԹՄԱՆԻ ՈՐԴԻ. ՆԱԻԱՅՍԱՐԴ (գծ. 53). Բսվականին բարդ ու ընդարձակ այս փակագրին մի շարք ուսումնասիրողների թվում ավելի հանգամանորեն անդրադարձել է Կ. Ղաֆադարյանը[36]։ Նա, մերժելով իր նախորդների ոչ հավաստի ընթերցումները, փակագրի միջնստեղի և երրորդ սյունագծի գրերը վերծանել է Վարպետ Նաւայսարդ, որդի.... ձևով, սակայն կասկածի տակ առել վարպետ բառի իսկությունը։ Միաժամանակ նա կռահել է, որ որդի բառից առաջ կարող է լիներ Նավասարդի հոր անունը, որն «անհնարին է վերականգնել առանց օժանդակ աղբյուրի»[37]։

Նկ. 3.

Ըստ մեր վերծանության, որը կարծում ենք հավաստի է, պարզվում է՝ ճաշակով ձևավորված փակագրի աջ ստեղնին գրված է XVII դ. կեսերում Հաղբատավանքի առաջնորդ Բարսեղ եպիսկոպոսի[38] անունն ու կոչումը։ Միջնստեղնի վերին հատվածում, առանց էական դժվարության, կարդացվում է Թման, և պարզվում է, որ այստեղ, հիրավի, հայրանունն է, սակայն

36 Նույն տեղում, էջ 149, արձ. 9։
37 Նույն տեղում, տե՛ս ծանոթագրությունը։
38 Նույն տեղում, էջ 276։







ոչ թե ճարտարապետ Նավասարդի (ինչպես հնթադրել է Կ. Ղաֆադարյանը), այլ Բարսեղ եպիսկոպոսի, որի անունը, բարեբախտաբար, պահպանվում է նույն վանքի զանգակատան 1655 թ. արձանագրության մեջ՝ Թոման ձևով[39], Այսպիսով, գտնված է նաև հայրանվան իսկությունը ստուգելու օժանդակ աղբյուրը։ Փակագրի ժամանակն է 1655—1656 թթ.»։

ՄԱՐԳԱՐ (գծ. 54). Էջմիածնի Մայր տաճարի գլխավոր զանգակատան (1654—1658) երկրորդ հարկի արևելյան լանջաբաժան սալի (կոնյոկի) վրա այսպես է փորագրել ծածկասալերի վարպետն իր անունը[41]։

ՎԱԽԱԽ. ԹՎ. ՌՃԺԱ (1662), (գծ. 55). Փորագրված է Եղվարդի եռահարկ տաճարի երկրորդ հարկի հյուսիսային պատին, ներքուստ։ Նույն պատի խաչաքանդակներից մեկի մոտ ևս հիշատակված է՝ ԽԱՉՍ ՎԱԽԱԽԻՆ։

ԴԱՒԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ (գծ. 56). Մուղնու ս. Գևորգ եկեղեցու թմբուկի վրա փորագրված են չորս ավետարանիչների խորհրդանշանները՝ անվանագրությամբ։ Հարավ-արևմտյան կողմում, Մարկոս առաքյալի բարձրաքանդակից վերև է այս գեղագիր փակագիրը, որը վերծանվում է դյուրությամբ։ Դավիթը Մուղնու վանքը կառուցող Հովհաննես վարդապետի եղբոր որդին և հաջորդն է 1669 թվականից։ Դավթին է պատկանում շինության ավարտի և հարդարանքի պատիվը։

ԱԼԷՔՍԱՆ (գծ. 57). Նույն եկեղեցու արևմտյան շքամուտքի բարավորի 1669 թ. արձանագրության վերջում է։ Ալեքսանը, ինչպես պարզվում է եկեղեցու կառուցողական ընդարձակ արձանագրությունից, հայոց քարտուղարն էր և նույն շինության հարավ-արևելյան սյան վիմագրի հաղորդմամբ (1670), արձանագրությունները գրվում էին «ձեռամբ Ալէքսանին»։ Հ. Շահխաթունյանցը փակագիրը ընթերցել է ԱՄԷՆ[42], իսկ Կ. Ղաֆադարյանը՝ ճիշտ[44]։

ԱԼԷՔՍԱՆ ՆՕՏԱՐ (գծ. 58). Ալեքսանը նոտար անվամբ է հիշվում եկեղեցու արևելյան պատի 1670 թ. արձանագրության մեջ։

ՍԱՐԳԻՍ (գծ. 59). փորագրված է Ակարակի բազիլիկայի (Մեղրու շրջան) արևելյան պատին, արտաքուստ՝ XVII դ. առաջին կեսին։

ԹՈՄԱ ՎԱՐԴԱՊԵՏ (գծ. 85). Այս փակագիրը Դաղիվանքի գլխավոր եկեղեցու արևելյան պատի հարավային խորշի սջ կողմում է, մեկուկես մետր բարձրությամբ։ Իր կոմպոզիցիայով բավականին նման է Դավիթ վարդապետի (Մուղնի) փակագրին և ժամանակով էլ պիտի մոտ լինի նրան։

ՈՎԱՆԷՍ (գծ. 86). Փորագրված է առաջինի տակ և ապա նույն պատի հյուսիսային թևում՝ անշուք խաչաքանդակների հարևանությամբ։ Երկու անգամ կրկնվող այս փակագրերը ձևով ու չափով գրեթե հարանման են, սակայն, կարծում ենք, դրանք վերաբերում են առանձին մարդկանց, քանի որ

---

39 Նույն տեղում։

40 Ի դեպ. այս փակագրից վերև, ս. Նշան եկեղեցու հարավային կամարի վերանորոգման արձանագրության սկզբի ի թվին ՌՃ. եւ յառաջնորդութե(ա)ն հատվածը (նույն տեղում. էջ 149, արձ. 8) պետք է ընթերցել... Ի ԹՎՈՆ ՌՃԵ (1656), Ի ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵՄԱՆ...

41 Ավելի մանրամասն տես մեր «Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը» հոդվածը («Էջմիածին», 1976, Ե)։

42 Այս և հետագա երկու փակագրերի մասին ավելի հանգամանորեն տես մեր «Սուրբ Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը» հոդվածը («Էջմիածին», 1977, Ա)։

43 Հ. Շահխաթունյանց, նշվ. աշխ., հ. Բ, էջ 94։

44 Կ. Ղաֆադարյան, Հայկական գրի սկզբնական տեսակները, Երևան, 1939, էջ [illegible]։

անիմաստ է նույն անձի անվան փակագրումը երկու անգամ իրար մոտ։ Փակագիրը կարող է վերաբերել XVII կամ հետագա դարին։

ԱՅՍ է (գծ. 60). Խորակերտից ոչ հեռու, Վրաց. ՍՍՀ Մառնեուլի շրջանի Ջանախչի գյուղի արևելակողմի սարալանջի երկաուված տապանաքարի վրա է (XVII դ.)։ Բառերի փակագրման այս ձևին հանդիպում ենք առաջին անգամ։ Տապանագիրը թեև մասամբ եղծված է, սակայն ամբողջանում է հետևյալ կերպ. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ/ ՈՐԴ? ԷԼԻՋԲԱՐԻ/ ԿԻՆ ՓԱՐԻՆԱՆԻՆ։

Նկ. 4.

ԱՆԻՐԱՎ (գծ. 61). Խոր-Վիրապի բազիլիկ եկեղեցու արևելյան պատի փակագրի նման վերծանումը թեական է (XVII դ.)։

ՏՓԽԻՍՏԻ ԵՍԱՒ (գծ. 62). Գեղարդավանքի ժայռափոր եկեղեցու հյուսիսային աբսիդայի արևելյան սյան վրա հալիվ նկատվող այս հիշատակագիրը 2—3 հարյուր տարվա պատմություն ունի։

ԱԻՐ ՇԱՒԱԹ (գծ.63). Այսպես ենք վերծանում Գեղհովտի գյուղամիջյան գերեզմանոցի 1711 թ. տապանագրի վերջին տողը, որը, հրատարակչի վկայությամբ, մնացել է անորոշ[45]։

ՅԱԿ[Ո]Բ ՎԱՐԴԱՊ[Ե]Տ (գծ. 64). Էջմիածնի հին վեհարանի կամարակապ սրահի քարեղարանում ցուցադրվում են 50×80 սմ չափի երկու խաչքարեր, որոնք եղել են պատի շարքում։ Հավանական է, որ դրանք XVII—XVIII դդ. վանքի ընդհանուր վերանորոգությունների շրջանից են, ինչպես հուշում է մեկի՝ [Խ]ԱՉՍ ՎԱՐՊԵՏ ՅՈՎԱՆԷՍԻՆ՝ ՆՈՐՈԳ[Ո]ՂԻ հիշատակությունը, բայց թե ինչ է նորոգել Հովհաննեսը՝ հայտնի չէ, քանի որ անհայտ է այդ քարի նախնական տեղը։ Իսկ փակագրով հանդես եկող Հակոբ վարդապետը թերևս վերանորոգման աշխատանքների վերակացուն է։

45 «Դիվան», պրակ IV, էջ 227, արձ. 952։

ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱ ՅԱԿՈԲ ՇԱՄԱԽԵՑԻ. Թվ. ՌՃՀ (1721), (գծ. 65, նկ. 4). Փորագրված է Երևանի եկեղեցու նախասրահի կենտրոնական կամարի աջ սյան արևմտյան ճակատին։ Փակագրի տակ հանդես եկող Հակոբը հայոց կաթողիկոսն էր 1759—1763 թթ., իսկ մինչև այդ՝ հայրապետական աթոռի տեղապահը։ Քանի որ փակագիրը գրվել է նախքան Հակորի կաթողիկոս օծվելը, նա կոչվում է Քրիստոսի ծառա, իսկ 1728 թ. էջմիածնում նրա պատվերով գրված «Ժողովածուի» հիշատակարանում՝ ուղղակի Հակոր Շամախեցի[46]։ Նկատելի է, որ այս և հաջորդ փակագիրը ունեն յուրօրինակություն՝ որոշ տառանշաններ հավասարապես ծառայում են երկու տառի։

ՇԱՄԱԽԵՑԻ ՅԱԿՈԲ. ԹՎԻՆ ՌՃՀԱ (գծ. 66). Որքան էլ տարօրինակ է, Հակոբի անունը մեկ տարի հետո փակագրվել է նաև Հռիփսիմե տաճարի արևելյան պատի հարավային նիշայի մեջ։ Այստեղ փակագրի կոմպոզիցիայում փոխված է անունն ու ծննդավայրը մատնանշող տառերի դասավորությունը[47]։

Փակագրից անմիջապես վերև, նույն քառանկյան մեջ, կա քառատող մի արձանագրություն, որը հավաստում է. ԵՍ՝ ԷՋՄԻԱԾՆԵ/ՑԻ ՅՈՀԱՆԻ ՈՐԴԻ/ ՊԵՏՐՈՍ ԳՐԵՑԻ ԹՎ/ԻՆ ՌՃՀԱ-ԻՆ (1722), ԱՄԷՆ։ Արդ՝ ի՞նչ է գրել Պետրոսը 1722 թ.։ Կարծում ենք, որ ակնարկը վերաբերվում է հենց այն փակագրին, որի մասին, հասկանալի է, արձանագրության մեջ որոշակի չէր գրվի, այլապես փակագիրը կկորցներ իմաստը։

ԽԱՉՍ ԹՈՐՈՍ ԳՐՈՂԻՆ ՈՂՈՐՄԻ. Թվ. ՌՃՁՁ—1737 (գծ. 49). Փակագիրը քանդակված է Խոր-Վիրապի վանքի գլխավոր եկեղեցու արևմտյան պատին, մուտքից աջ։ Կասկած չի հարուցում, որ խաչաքանդակն ակտիվորեն մասնակցում է մտքի ամբողջացմանը, որը և վերականգնում, ներմուծում ենք վիմագրի մեջ։ Թվատառի Ճ-ն կցված է Ռ-ին, որը եզակի համառոտագրություն է։ Առարկայի պարզ պատկերը ԽԱՉ բառիմաստով հանդիպում է Երզնկայի գաղափարագրերում[48] ևս։

ՏԷՐ ԱՆՏՈՆԻՆ (գծ. 67). Պատմաբան Վ. Հարությունյանը այս փակագիրը ընդօրինակել է Շատիվանքի սեղանատան հարավային պատուհանից վերև, ներքուստ։ Անտոնը վանքի առաջնորդն է եղել և 1739 թ. այնտեղ նորոգումներ է կատարել[49]։

ՆԱԻԱՊԵՏ ԱՊԻՐԱՏ (գծ. 68). Սևանի մեծ եկեղեցու հյուսիսային պատի տակ ընկած երեսապատ քարի խաչաքանդակի արձանագրությունը կարդում ենք՝ ՌՄԼԴ (1785 թ.), ՔՍ ԱԾ /ՇՆՈՐՀԻՒ/ ԽԱՉԻ ՔՈ ՍԲ/ ՕԳՆԵԱ ԻՆՁ. իսկ օգնություն հայցողը փակագրի տակ հանդես եկող նավապետ Ապիրատն է։

ՈՐԴԻ (գծ. 69). Տարածված այս փակագիրը վերցված է Վարդենիսի շրջանի Գթաշեն գյուղի գերեզմանատան XVIII դ. սկզբի մի տապանագրից[50]։

---

46 «Յուցակ ձեռագրաց», հ. Ա, էջ 1446։ Բնավ չի բացառվում, որ վերջին Թ-ն միաժամանակ լինի թվատառի միավորը ՌՃՀԹ (1630)։

47 Թվատառի միավոր չենք համարում փակագրից աջ, հետագայում փորված անմշակ Ա-ն։

48 Ա. Գ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 158։ Թվատառ Ճ-ն, թյուրիմացաբար, չի գծագրվել։

49 «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 162, արձ. 490։

50 Ավելորդ չենք համարում ներկայացնել այստեղի մի քանի տապանաքարերի անտիպ արձանագրությունները՝ սկսելով փակագիրը կրողից (գծ. 69). ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ /ՄԱՅԻԼԻՆ. ՈՐԴԻ ԿՈՒՉԻՆ։ Գոկչու մյուս որդու տապանագիրը (գծ. 70). ԱՅՍ Է Հ/ԱՆԳԻՍՏ /ԱՎԱՆԷ/ՍԻՆ.

ԳԱՐՍՈՒ (գծ. 73). Բջնիի տաճարի զանգակատան արևմտյան պատին ագուցված գեղաքանդակ խաչքարի ձևավոր պատվանդանի ձախ եզրի այս փակագիրը կարելի է ընթերցել նաև ԱՐԳԱՄ կամ ՄԱՐԴԱՐ, սակայն խաչաքանդակից աջ փորված ՍՈՒ-ն դառնում է անիմաստ, ուստի այն միացնում ենք փակագրին և ընթերցում Գարսու։

ԳՐԻԳՈՐԱ (գծ. 74). Նույն պատվանդանի աջ եզրում գրված փակագիրը նախորդի ժամանակակիցն է։ Ի դեպ, խաչքարը XIII դ. վերջի կամ XIV դ. սկզբի ստեղծագործություն է, բայց փակագրերն այդքան հնություն չունեն։ Նկատի ունենալով, որ փակագիրը ուղղակի կցված է խաչաքանդակին, այն ընթերցում ենք ԽԱՉՍ ԳՐԻԳՈՐԱ է։

ՄԱՐԿՈՍ (գծ. 75). Այս փակագիրը Խոր-Վիրապի վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի կենտրոնական մասի խառնիխուռն խզբզանքների արանքում է։ Փակագրի հարևանությամբ թվագրված է 1854 թ.։ Ի դեպ, գծապատկերները հիշեցնում են Ագարակի փակագիրը (գծ. 59)։

ՍԻՄԷՈՆ (գծ. 76). Էջմիածնի բազիլիկայի թեմական եկեղեցու 1872—1875 թթ. կառուցված պարսպի արևմտյան մուտքի ձախ սյան վրա եղած այս փակագիրը բավական փոքր և անշուք է։

ԱՂԱԲԵԿՆ (գծ. 77). Այս փակագիրը նույն մուտքի հարավային սյան արևմտյան ճակատի ներքևից երրորդ շարքի քարերից մեկի վրա է (XIX դ.)։

ԱՐԱՄԱՒ (գծ. 78). Նույն եկեղեցու մուտքի աջ կողմում հոլովված ձևով գուցե և փակագրված է շինարար վարպետի անունը։

ՍԱԲԻՐ (գծ. 79). Անվարժ ձեռքով փորագրված է Դայանե եկեղեցու կիսագավթի հարավային սյան արևմտյան նիստին, Հակոբ Շամախեցու դեղադիր փակագրից աջ և ներքև։ Տառի ձախ ստեղնի վերին մասը կոտրված-եղծված է (XIX դ.)։

ԴԵՂԻ (գծ. 80). Այս անձնանունը առաջինից ձախ է։

Թ. 1904, ՎԱՍԱԿԱՅ (գծ. 81). Փորագրված է Էջմիածնի միաբանության բնակելի շենքի արևմտյան ճակատին, հյուսիսից նախավերջին մուտքի ձախ կողմում։ Այն կարելի է ընթերցել նաև ՎԿԱՅ, բայց դա անիմաստ կլիներ։ Փակագիրն ամբողջովին պետք է ընթերցել ...ԹՎԻՆ 1904. ԽԱՉՍ ՎԱՍԱԿԱՅ։

ՍԱՐԳԻՍ (գծ. 82). Այս փակագիրը գտնվում է Անիի շրջանի Զորակապ գյուղի 1869—1871 թթ. կառուցված ս. Աստվածածին եկեղեցու մուտքի բարավորի վրա և, հավանաբար, շինարար վարպետի անունն է։

ԵԿԵՂԵՑԻ-ԻՍ (գծ. 83). Նույն հուշարձանի կառուցողական արձանագրության վեցերորդ տողում եկեղեցի բառը ծածկագրվել է սայմանանշանով։ Նույն նշանը, առանց խաչի, եկեղեցի իմաստով հանդիպում է նաև կիլիկյան գաղափարագրերում[51]։

ԽԱԹՈՒԻՆ (գծ. 84). Այս անունը փորագրվել է Մարմաշենի վանքի գլխավոր տաճարի հարավային պատին՝ վերջին դարերում։ Փակագրից վերև ու աջ

ՈՐԴԻ ԳՈԿՉԻՆ։ Իրեն՝ Գոկչու տապանագիրն է (գծ. 71). ԱՅՍ է ՀԱՆ/ԳԻՍՏ ԳՈԿ/ՉԻՆ, ՈՐԴ/Ի ԴԱՎԻԹ/ԻՆ. ԹՎ. Ռ/ԺԿԸ (1719)։ Այստեղ, նույն շարքում է ամփոփված նաև Գոկչու մայրը՝ ՍԱԼԸ, որի տապանագրի համաձայն ամուսինը (Գոկչու հայրը) եղել է Գթաշենի քյոխվան։ Ահա և այդ արձանագրությունը (գծ. 72). ԱՅՍ է Հ/ԱՆԳԻՍՏ/ ՍԱԼԻՆ, Կ/ՈՂԱԿԻՑ /ԴԱՒԻԹ/ ՔՈԽՎԻՆ. ԹՎ. ՌՃԿ (1711)։

51 Ա. Դ. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, էջ 155։

եղած տառերը կապ չունեն նրա հետ, այլապես կգրվեին մեկ տողում, իրար կից և կրնթերցվեր ՁԽԱԲՈՒՆԻՆ, կամ, թերևս՝ ՁԽԱՁՍ ԽԱԲՈՒՆԻՆ։

Դիտելով փակագրերի գծագրերը, ինչպես և նկատի ունենալով դրանց ժամանակն ու պատմական կարևորությունը, դժվար չէ համոզվել, որ դրանք ամարժեք չեն ոչ բարդությամբ և ոչ էլ գիտական արժեքով։ Մեր կարծիքով, առավելապես կարևոր են Դվինի, Սիսիանի, Շենիկի, Առինջի, Հաղբատի, Էջմիածնի, Խոր-Վիրապի, Զորակապի և մի քանի այլ վայրերի փակագրերը։

Վիմագիր փակագրերի հրապարակման այս առաջին ամփոփ փորձը հավակնություն ունի խթանելու դրանց հավաքման ու մասսայականացման գործը։ Սա այն բանից հետո, երբ ամբողջովին կամ մաս առ մաս հրապարակ կգան հայկական փակագրերի հավաքածուները, հնարավոր կլինի հանգամանորեն անդրադառնալ դրանց հնագիտական, գեղագիտական արժանիքներին, վեր հանել առավել տարածված ու ընդհանրացած օրինաչափությունները, որոշել փակագրերի տեղը հայագիտության մեջ։

ШИФР В АРМЯНСКОЙ ЭПИГРАФИКЕ

СУРЕН САГУМЯН

Резюме

Шифр представляет собой скомпонованное в одном буквенном знаке, красиво оформленное слово или группа слов единого смыслового значения. Он распространен на печатях и перстнях, в рукописях и ювелирных изделиях, а также в эпиграфике. Часть шифров—это встречающиеся в общем тексте отдельные слова или собственные имена. Шифры применялись с целью тайнописи начиная с V—VI вв. Некоторые их образцы настолько сложны, что их расшифровка сопряжена с большими трудностями.